

ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Հենրիկի Գալստյանի

«Չար ոգիները հայ ժողովրդական գրույցներում.
տեսակների դասակարգումն ըստ գործառույթների»
թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Բանագետ Հ.Հ. Գալստյանի ատենախոսությունը նվիրված է հայ բանագիտության մեջ քիչ ուսումնասիրված մի ոլորտի՝ ստորին դիցաբանությանը կամ դիվաբանությանը: Ի տարբերություն վերին առասպելաբանության, որն ուսումնասիրում է գլխավոր ու երկրորդական աստվածների կերպարները, նրանց գործառույթներն ու նրանց հետ կապված առասպելները, և՛ միջին առասպելաբանության, որն ուսումնասիրում է կիսաստվածներին՝ դյուցազուններին, առասպելական արքաներին ևն,- ստորին առասպելաբանության կամ ստորին դիցաբանության հետազոտական առարկան չար ու բարի ոգիներն են, նրանց առնչվող առասպելները, գրույցներն ու հավատալիքները: Քանի որ չար ոգիներին վերաբերող բանահյուսական և ազգագրական տվյալներն արդեն իսկ բավական հարուստ են ու բազմաշերտ, ատենախոսության թեման կոնկրետացվել է միայն դրանց շուրջ:

Ուսումնասիրության առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ ստորին առասպելաբանության կերպարներն առավել «կենսունակ» են, դրանց ծագումը հասնում է մինչև նախապատմական ժամանակներ և արմատները մինչև իսկ տոտեմական հավատալիքների դարաշրջանից են գալիս, այսինքն՝ ժամանակագրական առումով այդ կերպարները չափազանց ընդգրկուն են, իսկ իրենց հավատալիքային բովանդակությամբ՝ խիստ տարողունակ: Ինչպես իրավացիորեն նշում է ատենախոսը, հենց այս պատճառով է նաև, որ քրիստոնեության ընդունումից հետո անգամ ստորին առասպելաբանության կերպարների մասին հավատալիքները շարունակեցին գոյատևել և մինչ օրս կենցաղավարում են ժողովրդի մեջ:

Այս հանգամանքը մի կողմից առավել հետաքրքիր ու արժեքավոր է դարձնում կատարված աշխատանքը՝ անցյալը և ներկան կապելու տեսանկյունից, սակայն մյուս կողմից՝ մեծացնում է հետազոտության առարկայի ծավալը և հրամայական դարձնում ավանդական բանահյուսությունը արդիական թեմաների հետ շաղկապելու անհրաժեշտությունը կամ, առնվազն, դրա գիտակցումն ու դրան հասնելու ձգտումը: Ամեն դեպքում, Հասմիկ Գալստյանի օգտագործած սկզբնաղբյուրների թվում ոչ միայն մեր վաղմիջնադարյան մատենագիրների աշխատանքներն են, որոնցում պահպանվել են հայ դիվաբանական հավատալիքներին առնչվող հիշատակույթներ, այլև նոր ժամանակներում գրառված բանահյուսական և ազգագրական ժողովածուներն ու ուսումնասիրությունները: Հատկանշական է, որ չար ոգիների մասին տեղեկությունները

քաղված են ոչ միայն դրանց համար ամենաբնորոշ՝ սնահավատական գրույցներից, ավանդագրույցներից ու հրաշապատում հեքիաթներից, այլև բանաձևային բանահյուսական ժանրերից, որոնցում չար ոգիների հիշատակուժն առավելաբար հմայական կամ խորհրդանշական բնույթ ունի, և դրանց կերպարային առանձնահատկությունները, բնականաբար, չեն կարող դրսևորվել սյուժետային ծավալուն շարադրանքով:

Ստորին առասպելաբանության կենսունակությունը կարելի է բացատրել նրանով, որ այն երբեք կանոնակարգված ձևով չի մտել պաշտոնական կրոնական գրվածքներ, հանդես չի եկել որպես պաշտոնական կրոնական համակարգի մաս և ստեղծվել է գերազանցապես ժողովրդի հասարակ խավերի մեջ՝ որոշ չափով ներկայացնելով պաշտոնական կրոնի սովերային՝ ոչ-պաշտոնական հատվածը, որն առավել մոտ և հարագատ է հասարակ ժողովրդին, կազմում է նրա ամենօրյա կենցաղի, առտնին սովորույթների և ավանդույթների անքակտելի մասը: «Պաշտոնականի» և «ոչ-պաշտոնականի» այս թվացյալ հակադրությունն արտահայտված է դրանցից յուրաքանչյուրի դոգմաները ներկայացնող հավաքածուներում՝ «Աստվածաշունչ» և «Պառավաշունչ» անվանումներով, որոնցից առաջինը կանոնակարգված Սուրբ Գիրքն է, իսկ երկրորդը՝ ժողովրդի մեջ պատմվող սնահավատական գրույցների անգիր հավաքականությունը: Եթե նախաքրիստոնեական հեթանոսական աստվածների կերպարների դասակարգված ամբողջականությունն անվանում ենք դիցարան (միջազգային եզրույթով՝ պանթեոն), և այն կազմում է վերին առասպելաբանական համակարգի առանցքը, ապա ստորին առասպելաբանության կամ դիվաբանության (այստեղ «դև» անվան տակ հարկ է հասկանալ այս եզրույթի առավել վաղնջական՝ դրական և բացասական հայեցակողմերը միասին վերցրած) առանցքը կազմում է բարի ու չար ոգիների դասակարգված ամբողջականությունը՝ դիվարանը (միջազգային եզրույթով՝ պանդեմոնիում):

Սույն ատենախոսությունը Հասմիկ Գալստյանի երկարամյա հետազոտական պրպտումների, առկա գրականության մանրակրկիտ ուսումնասիրման, սեփական դաշտային դիտարկումների և գրառումների արդյունքն է: Աշխատանքը կատարվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեքստաբանության բաժնում, թեման որոշվել և կատարվել է այդ բաժնի նախկին վարիչ Բ.Գ.Թ. Ալվարդ Ղազիյանի ղեկավարությամբ, այնուհետև շարունակվել է ներկայիս բաժնի վարիչ Բ.Գ.Գ. Թամար Հայրապետյան ղեկավարությամբ:

Ներածություն: Ինչպես նշում է հեղինակն ատենախոսության «Ներածության» մեջ (էջ 14), իր աշխատանքի խնդիրները խմբավորվում են հետևյալ հաջորդական փուլերով՝ ա) առկա նյութի (տպագիր, անտիպ, բանավոր) հավաքագրում և մեկտեղում, բ) խմբավորում և դասակարգում, գ) վերլուծություն և համեմատություն: Կարելի է ասել, որ հեղինակը միանգամայն հասել է իր սահմանած խնդիրների լուծմանը:

Ներածության մեջ ատենախոսը մանրամասնորեն ներկայացնում է իր ուսումնասիրության առարկային վերաբերող տեսական գրականությունը, վերլուծում

առկա եզրույթները: Այստեղ որոշակի խնդիր է առաջացնում այն, որ ատենախոսության մեջ քննվող նյութերի լայն շրջանակը հայ բանագիտության մեջ ավանդաբար արժարժվել է «սնահավատական գրույցներ» վերտառությամբ, և փաստորեն մեզանում առաջին անգամ է գիտական լուրջ աշխատության միջոցով շրջանառության մեջ դրվում «ստորին առասպելաբանություն» բառեզրը: Կուզեինք նշել Ներածության մեջ երբեմն հանդիպող՝ որոշ հնացած եզրույթների կիրառումը, օրինակ՝ ավանդություն՝ ավանդագրույցի փոխարեն (էջ 12), ինչպես և այն հանգամանքը, որ ատենախոսության մեջ կիրառված մեթոդների մասին խոսելիս՝ ատենախոսը չի մանրամասնում և կոնկրետ օրինակներով ցույց չի տալիս, թե ինչպե՛ս և որտե՛ղ են կիրառվել իր մատնանշած տիպաբանական և ֆենոմենոլոգիական մեթոդները (հմմտ. էջ 13):

1-ին գլուխ: Ատենախոսության առաջին գլուխը կոչվում է «Չար ոգիների մասին ժողովրդական գրույցների ժանրային ու կառուցվածքային առանձնահատկությունները»: Առաջին գլխի առաջին բաժնում («Զրույցի ժանրը և անվանումները») ատենախոսը շարունակում է վերոնշյալ եզրույթաբանական հարցերի քննարկումը, որն արդեն արել է Ներածության մեջ: Թեև գլուխը նվիրված է չար ոգիներին վերաբերող ժողովրդական գրույցների առանձնահատկություններին, սակայն առաջին երկու էջերում (էջ 16-17) հեղինակը նորից գրում է սնահավատական գրույցների և ստորին առասպելաբանության հարաբերակցության մասին: Կարծում ենք, որ այս հատվածն ավելի ճիշտ կլիներ տեղափոխել Ներածություն, բացի այդ՝ «սնահավատական գրույց» բնորոշումը պետք չէ հակադրել «ստորին առասպելաբանություն» եզրույթին, այլ ընդհակառակը՝ եթե համառոտակի ձևակերպելու լինենք այս երկու հասկացությունների կապը, ապա կարելի է ասել, որ ստորին առասպելաբանության կերպարների մասին հյուսված սյուժետային պատմությունները հաճախ արտահայտվում են սնահավատական գրույցների միջոցով: Միննույն ժամանակ, ոչ բոլոր սնահավատական գրույցներն են, որ վերաբերում են չար (կամ բարի) ոգիներին: Այդպիսով, որպես հետազոտական գիտակարգի՝ բանագիտության ուսումնասիրության առարկան է՝ բանահյուսական առանձին ժանրի, տվյալ դեպքում՝ սնահավատական գրույցների ուսումնասիրությունը, իսկ դիվարանի և դրա կերպարների ուսումնասիրությունն արդեն պատկանում է համեմատական առասպելաբանության տիրույթին:

Այս գլխի երկրորդ բաժինը, որը վերնագրված է «Գիտական տերմինաբանության խնդիրը» (էջ 21), նույնպես իր բովանդակությամբ չի համապատասխանում ժողովրդական գրույցների ժանրային ու կառուցվածքային առանձնահատկությունների քննարկման ոլորտին, քանի որ հիմնականում անդրադառնում է «դիվաբանություն», «գերբնական ուժեր», «չար ու բարի ոգիներ», «ստորին առասպելաբանական կերպարներ» և նմանատիպ այլ եզրույթների: Այնուհետև հեղինակը գրում է կերպարների անվանումների և դրանց նույնականացման խնդրի շուրջ, ինչը նույնպես դուրս է սնահավատական գրույցների սահմանումը տալու խնդրի շրջանակից:

Առաջին գլխի երրորդ բաժնում ատենախոսը քննարկում է ստորին առասպելաբանության կերպարների դասակարգման սկզբունքը (էջ 23): Թեև

ենթավերնագրում «սկզբունք» բառն օգտագործված է եզակի թվով, սակայն իրականում այստեղ քննարկվում են մի քանի տարբեր սկզբունքներ: Ինչևէ, այս խնդիրը կազմում է ներկա ատենախոսության առանցքը, ուստի նպատակահարմար կլիներ, որ այն արծարծվեր ոչ թե գրույցների ժանրային ու կառուցվածքային առանձնահատկությունների քննարկման գլխում (մանավանդ որ դասակարգմամբ առանձնացված որևէ խմբին կերպարի պատկանելությունը գրեթե չի ազդում գրույցի ժանրային կամ կառուցվածքային հատկանիշների վրա), այլ դրան նվիրված լիներ մի առանձին գլուխ՝ համապատասխան բաժիններով: Պետք է նշել նաև, որ հեղինակը բերում է հայկական դիվարանի դասակարգումն ըստ Ալիշանի և այն համարում «ամենահաջող փորձն այս առումով», սակայն հետագա հայ բանագետները չեն հետևել Ալիշանի դասակարգմանը, և այն կարելի է համարել բավական հնացած, մինևույն ժամանակ՝ այն տարածամանակյա կտրվածքով է ներկայացնում հրեշների ու ոգիների անվանումներն ու դրանց խմբավորումը, մինչդեռ ատենախոսի խնդիրը դուրս է հայ մատենագրության մեջ վկայված ողջ դիվարանական նյութն ընդգրկելուց և կենտրոնանում է համաժամանակյա ազգագրական-բանագիտական խնդիր լուծելու վրա: Այս բաժնի 5 էջերից չորսում հեղինակը քննարկում է նախորդ հետազոտողների կողմից ոգիների դասակարգման փորձերը (էջ 23-26) և միայն վերջին մեկ էջում (էջ 27) է բերում իր ատենախոսության մեջ ընդունված դասակարգումը, այնինչ ցանկալի կլիներ առավել մանրամասնորեն ներկայացնել ու հիմնավորել սեփական մոտեցումները:

Կարծում ենք նաև, որ այս գլխում հարկավոր էր հստակորեն սահմանազատել այն սնահավատական գրույցները, որոնք չեն առնչվում դիվարանի կերպարներին, այլ վերաբերում են սրբերին, սուրբ իրերին, սուրբ բույսերին ու կենդանիներին, ինչպես և՛ փոխակերպության, հմայության ու բանադրանքի մասին գրույցները: Եթե ատենախոսությունն ուսումնասիրում է ոչ թե բոլոր սնահավատական գրույցները, այլ դրանցում չար ոգիների կերպարներն ու դրանց գործառույթները, ուրե՛մս վերոնշյալ բոլոր գրույցները դուրս են ատենախոսի հետազոտության շրջանակից:

Երկրորդ գլխում քննարկվում է «Դևը և դիվականը հայ ժողովրդական բանահյուսության մեջ» (էջ 28): Բերելով լեզվաբանների առաջարկած՝ դև բառի ստուգանությունը, հեղինակը, միաժամանակ, չի մասնավորեցնում, թե նախորդ գլխում իր սահմանած դասակարգումների սանդղակի ո՛ր խմբի մեջ է մտնում այս կերպարը, չի որոշակիացնում և չի սահմանում այս կերպարի գործառույթներն ու նկարագիրը: Հանուն ճշմարտության անհրաժեշտ է նշել, որ այս խնդիրը գրեթե անլուծելի է, քանի որ «դև» բնորոշումը չափազանց ընդհանրական է, փոփոխվել է ամենատարբեր ժամանակաշրջաններում և տարբեր տարածաշրջաններում, նաև հաճախ տրամագծորեն հակառակ դրսևորումներ է ստացել բանահյուսական տարբեր ժանրերում: Մի դեպքում դևը նույնանում է անճոռնի հսկայի կամ կիկլոպի հետ, մեկ այլ դեպքում՝ մի քանի գլխանի վիշապի, այլ դեպքերում էլ՝ սատանայի կամ քաջքի հետ: Այս մասին ինքը ատենախոսն էլ նշում է (էջ 28), որ «դևը նույնացվում կամ զուգահեռվում է քաջքերի, վիշապների և օձերի հետ»: Սա հաշվի առնելով՝ հարկավոր էր, նախ և առաջ,

իրարից տարանջատել բառի լեզվաբանական-իմաստաբանական և բանագիտական նշանակությունները, որոնք ոչ միշտ են նույնական: Նշված հստակեցումը չկատարելու հետևանքով այս գլխում մեկտեղված և միախառնված են քրիստոնեություն-հեթանոսություն հակադրությունն արտահայտող վաղմիջնադարյան գրույցները ուշ սնահավատական գրույցների հետ: Այս անհստակության հետևանքով է նաև, որ երկրորդ գլխի երեք բաժինները տրամաբանորեն չեն շաղկապվում միմյանց. առաջին բաժինը կոչվում է «Դեր հայկական գրույցներում», բայց իրականում առնչվում է շատ ավելի լայն թեմատիկ դաշտերի, երկրորդ բաժինը վերնագրված է «Դիվահարություն և դիվահալածություն. հիվանդություն և բուժում», որն առավելաբար ավանդական ազգագրության տիրույթում է և իմաստաբանորեն հանդես չի գալիս որպես նախորդ բաժնի շարունակություն, երրորդ բաժինն էլ անվանված է «Սատանայի նկարագիրը ժողովրդական գրույցների համատեքստում» և սկսվում է «սատանա» բառի ստուգաբանությունից: Շարադրանքից պարզ չի դառնում՝ արդյո՞ք սատանան նույնանում է դևի հետ, եթե այո՝ ամբողջապե՞ս, թե՞ մասամբ, եթե մասամբ՝ ո՞ր գրույցներում են արտահայտվում այս կերպարների նմանություններն ու տարբերությունները, ո՞ր գործառույթներն են համընկնում, իսկ որոնք՝ ոչ:

Երրորդ գլուխը (էջ 72) վերաբերում է ծննդկանին ու նորածնին փաստող և մարդկության բազմացմանը խոչընդոտող ոգիներին՝ ալերին, թպղաներին, օրորոցագողին ու մանկասաստ ոգիներին: Այս գլուխն, ըստ ամենայնի, ատենախոսության ամենաարժեքավոր հատվածներից է, ունի կուռ և հստակ կառուցվածք ու ներքին տրամաբանություն: Նույնը կարելի է ասել նաև հաջորդ չորրորդ գլխի մասին, որը վերնագրված է «Տոմարի հետ կապված ոգիներ»: Այս գլխում քննարկվում են շվոտը, խլվիկը, խիպիլիկը:

Հինգերորդ գլխում մանրամասնորեն քննության են առնվում ջրի ոգիները և ուրվականները: Առաջին բնորոշման ներքո հեղինակը խմբավորում է հետևյալ ոգիներին՝ փերիներ, հավերժահարսներ, ջրանույշներ, հրեղեն աղջիկներ, ջրի պառափսեր, հուշկապարիկներ և այլն: Հետագա շարադրանքից, սակայն, այդքան էլ պարզ չի դառնում, օրինակ՝ ինչո՞վ են տարբերվում է փերիները հավերժահարսներից կամ ջրանույշներից, արդյո՞ք դրանք տարբեր առասպելաբանական կերպարներ են, թե՞ միևնույն կերպարի տարբեր անվանումներ: Չի որոշակիացվում նաև, թե արդյո՞ք սրանք միանշանակ չար ոգիներ են, եթե բարի են կամ մասամբ բարի, ապա ի՞նչ հիմնավորմամբ են ընդգրկվել չար ոգիների քննությանը վերաբերող այս աշխատության մեջ: Այս գլխի երկրորդ բաժնում՝ որպես ուրվականներ, քննարկվում են գոռնափշտիկները:

Որպես ատենախոսության մեջ առկա ընդհանրական թերացում կարելի է նշել տեքստի տարբեր հատվածներում միատեսակ նյութը ներկայացնելու կամ վերլուծելու ժամանակ սպրդած որոշակի կրկնությունները, ինչպես և կառուցվածքային այն խնդիրները, որոնց արդեն վերն անդրադարձանք:

Ատենախոսության եզրակացությունները բաղկացած են 25 կետերից: Սրանցից առաջին երեքը չեն առնչվում ատենախոսության բուն նյութին, քանի որ ձևակերպում են բարի ու չար ոգիների հետ կապված ընդհանրական հասկացությունների հարաբերակցությունը, այնինչ ատենախոսությունը միայն չար ոգիների մասին է: 4-րդ կետը չի կարող համարվել եզրակացություն, քանի որ նրանում արծարծված թեման չի ուսումնասիրվել ատենախոսության ոչ մի գլխում. այս կետում բերվում է պարզապես գիտական գրականությունից քաղված միտք այն մասին, որ «ոգիների հավատալիքները սկիզբ են առել առասպելաբանության ամենահին ակունքներից, որոնք կապված են դիվաբանական կերպարների առաջացման հետ: Ժողովրդի դիվաբանական պատկերացումներն առաջացել են հեռավոր անցյալում, չար ու բարի ոգիների մասին նախնական հավատալիքների հիմքի վրա» (էջ 151):

Գալով օգտագործված գրականությանը՝ ցանկալի կլիներ, որ ատենախոսն իր և գործընկերների դաշտային բանահյուսական և ազգագրական նյութերի ցանկը ներկայացնելիս, բացի գրանցման վայրը և թվականը նշելուց, մանրամասներ՝ արդյո՞ք դրանք ձայնագրություններ են, թե գրավոր նյութեր, եթե ձայնագրություն են՝ քանի՞ կտոր և քանի՞ թույլ, քանի՞ բանասացներից, եթե գրավոր նյութեր են՝ քանի՞ էջ և այլն: Նույնը վերաբերում է արխիվային նյութերի հղումներին:

Ատենախոսության հաջողված և արժեքավոր հատվածների շարքին է պատկանում նաև Հավելվածը, որի առաջին մասում հեղինակն ընդգրկել է հիմնականում իր գրանցած դաշտային բանահյուսական նյութերը (6 էջ), այնուհետև մեջբերում է այլ բանահավաքներից քաղած բանահյուսական տեքստեր և ժողովրդական աղոթքներ (7 էջ): Ցանկալի կլիներ, որ աշխատության բուն տեքստի որոշ էջերում մեջբերված ընդարձակ բանահյուսական հատվածները նույնպես ընդգրկվեին այս Հավելվածում, իսկ բուն տեքստում պարզապես կարճ հղում տրվեր Հավելվածի համապատասխան բաժնի վրա: Առհասարակ, աշխատանքը կշահեր, եթե ա տ է ն ա խ ո ս ու թ յ ա ն բ ու ն տ է ք ս տ ու մ շ ա ր ա դ ր վ ա ծ դ ա տ ո ղ ու թ յ ու ն ն եր ը , վերլուծություններն ու մտքերը առավել հաճախակի հիմնավորվեին Հավելվածի համապատասխան բաժինների վրա կատարված հղումներով:

Ատենախոսության ամենահեռանկարային և արժեքավոր հատվածը՝ Հավելվածի երկրորդ բաժինն է (32 էջ), որը վերնագրված է «Չար ոգիների անունների բառարան (բարբառային տարբերակներ, գործառույթներ, արտաքին տեսքի նկարագրություններ)»: Այստեղ ակնհայտ երևում է հեղինակի երկարամյա հետազոտության ողջ ընդգրկումն ու ծավալը, օգտագործած հսկայական գրականությունն ու կատարած մեծ աշխատանքը: Այս բաժինը մեծ ներուժ ունի հետազայում ընդլայնվելու և դառնալու առանձին մենագրություն:

Ատենախոսության մեջ քննված մի շարք հարցեր, որոշ ոգիների մասին առկա հավատալիքներին ու պատկերացումներին վերաբերող հետազոտական կարճ ակնարկներ փորձաքննություն են անցել հանրապետական գիտաժողովներին ներկայացված զեկուցումներով ու դրանց շուրջ ծավալված քննարկումներով, ինչպես և

պարբերականներում ու ժողովածուներում լույս տեսած հոդվածներով: Հասմիկ Գալստյանի ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, նյութը դասակարգված և վերլուծված է մեծ բժախնդրությամբ և գիտական բարեխղճությամբ: Նրա ուսումնասիրությունն, ըստ ամենայնի, հայագիտության և մասնավորապես՝ հայ բանագիտության մեջ առաջին լուրջ և համապարփակ փորձն է՝ մեկ աշխատության սահմաններում և գիտական հստակ մեթոդաբանության կիրառմամբ ներկայացնելու և վերլուծելու հայոց դիվարանի ընդարձակ բաժիններից մեկը, որը վերաբերում է չար ոգիների կերպարներին և նրանց գործառույթներին: Ինչպես նմանօրինակ այլ աշխատանքները, Հ. Գալստյանի ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից, որոնք մեծ մասամբ ունեն օբյեկտիվ պատճառներ: Անտարակույս, անհամեմատ ավելի շատ է ատենախոսի կատարած նոր հետազոտության մասնաբաժինը և դրա բերած նորույթը հայ բանագիտության մեջ: Հետևաբար մասնագիտական խորհրդի հարգաբաժան անդամներին աներկբա միջնորդում եմ Հասմիկ Հենրիկի Գալստյանին շնորհել իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա լիովին արժանի է:

06.12.2021 թ., Երևան

Պաշտոնական ընդդիմախոս՝ Տորք Դալայան, ք.գ.թ.
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանահյուսության տեսության և պատմության բաժնի վարիչ

ստորագրությունը հաստատում եմ՝
Արսեն Բոբոխյան, պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն

